**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ**
**ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N** ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ -2020/12-2

ք. Արտաշատ «11» 02 2020 թ.

<<Արտաշատի ԲԿ>> ՓԲԸ -ը ի դեմս Հայկ Համբարձումյան-ի, որը գործում է <<Արտաշատի ԲԿ>> ՓԲԸ -ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և ՍԱՄՆԱՆ ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Մ. Հայրապետյան-ի, որը գործում է ՍԱՄՆԱՆ ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհպտույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում

.բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ

պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:
2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:
**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**
2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:
2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:
2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:
2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:
2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:
**2.4 Վաճառողը պարտավոր է՝**
2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:
2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:
2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:
2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:
2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:
2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:
2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:
2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:
2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:
2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **1644950 մեկ միլիոն վեց հարյուր քառասունչորս հազար ինը հարյուր հիսուն** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:[17] Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:
Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:
3.2 Պայմանագրի գնից՝ մինչև ____________ ՀՀ դրամը, Գնորդը փոխանցում է Վաճառողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Գնորդին վճարումներ չեն կատարվում:[18]
3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:
4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված ________ օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի

ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:[19]

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:
Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):
5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված ____ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:
5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:
5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:
6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:
6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[20] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:
6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:
6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:
6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե

արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[21]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի  կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն  իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Վաճառողը գրավոր տեղեկացնում է Գնորդին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից  հինգ աշխատանքային օրվա ընթացքում:[22]

8.7 Եթե պայմանագիրն  իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:[23]

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Գնորդի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Վաճառողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովները Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:[24]

**10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| | ՍԱՄՆԱՆ ՍՊԸ |
| ԱՐՏԱՇԱՏԻ ԲԿ>ՓԲԸ | Ք. Երևան, Աջափնյակ, Հաարաթյան 8/1( |
| Ք.Արտաշատ, Ա.Խաչատրյան 116 | Հյաէկոնոմբանկ ԲԲԸ Մետաքս մ/ճ |
| Հ/Հ-163098222223 | h/h 163218023543 |
| ՀԷԲ Արտաշատի | ՀՎՀՀ 01272957 |
| ՀՎՀՀ-04220707 | Մանվել Հայրապետյան |
| Հ. Համբարձումյան | |
| ------------------------ /ստորագրություն/ Կ.Տ | ------------------------ /ստորագրություն/ Կ.Տ |

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

---

| Ապրանքի | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը և ապրանքային նշանը | արտադրողը և ծագման երկիրը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը /ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | | |
| | | | | | | | | | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը** |
| 1 | 22111200 | Դեղորայքի գիրք N3 | ՍԱՄՆԱՆ ՍՊԸ | A -4 ֆորմատի տպագրական թուղթ սպիտակ գույնի երկկողմ տպված տառերը և գծերը սև գույնի /օֆսեթ 70 գ/ք.մ./, կարված, բումվինիլ, կոշտ կազմով, 200 թերթ | հատ | 1250 | 50000 | 40 | Ք.Արտաշատ ,Ա.Խաչատրյան 116 | 40 | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 25.12.2020թ. պատվիրատուի պահանջով: Առաջին մատակարարումը պետք է լինի պատվիրատուից պատվերը ստանալուց առնվազն 20 օրացուցային օր հետո: երկրորդ մատակարարումից սկսված պատվերը ստանալուց մատակարարումը իրականացնել 2 |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | | *աշխատանքային օրվա ընթացքում:* |
| 2 | 22111200 | Դեղորայքի գիրք N6 | *ՍԱՄՆԱՆ ՄՊԸ* | A -4 ֆորմատի տպագրական թուղթ սպիտակ գույնի երկկողմ տպված տառերը և գծերը սև գույնի /օֆսեթ 70 գ/ք.մ./, կարված, բումվինիլ, կոշտ կազմով, 200 թերթ | հատ | *1250* | *75000* | 60 | *Ք.Արտաշատ ,Ա.Խաչատրյան 116* | 60 | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 25.12.2020թ. պատվիրատուի պահանջով: Առաջին մատակարարումը պետք է լինի պատվիրատուից պատվերը ստանալուց առնվազն 20 օրացուցային օր հետո: երկրորդ մատակարարումից սկսված պատվերը ստանալուց մատակարարումը իրականացնել 2 աշխատանքային օրվա ընթացքում: |
| 3 | 22111200 | Տաբելի գիրք | *ՍԱՄՆԱՆ ՄՊԸ* | A -4 ֆորմատի տպագրական թուղթ սպիտակ գույնի երկկողմ տպված տառերը և գծերը սև | հատ | *1100* | *33000* | 30 | *Ք.Արտաշատ ,Ա.Խաչ* | 30 | ֆինանսական միջոցներ նախատեսվելու |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | գույնի /օֆսեթ 70 գ/ք.մ./, կարված, բումվինիլ, կոշտ կազմով, 200 թերթ | | | | | տորյան 116 | | դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 25.12.2020թ. պատվիրատուի պահանջով: Առաջին մատակարարումը պետք է լինի պատվիրատուից պատվերը ստանալուց առնվազն 20 օրացուցային օր հետո: երկրորդ մատակարարումից սկսված պատվերը ստանալուց մատակարարումը իրականացնել 2 աշխատանքային օրվա ընթացքում: |
| 5 | 39263200 | Գրասենյակային գիրք 200թերթ | ՍԱՄՆԱՆ ՄԴԸ | A -4 ֆորմատի տպագրական թուղթ սպիտակ գույնի երկկողմ տպված տառերը և գծերը սև գույնի /օֆսեթ 70 գ/ք.մ./, կարված, բումվինիլ, կոշտ կազմով, 200 թերթ | հատ | 930 | 93000 | 100 | Ք.Արտաշատ ,Ա.Խաչատրյան 116 | 100 | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | | մինչև 25.12.2020թ. պատվիրատուի պահանջով: Առաջին մատակարարումը պետք է լինի պատվիրատուից պատվերը ստանալուց առնվազն 20 օրացուցային օր հետո: երկրորդ մատակարարումից սկսված պատվերը ստանալուց մատակարարումը իրականացնել 2 աշխատանքային օրվա ընթացքում: |
| 10 | 22821200 | Հետազոտության ուղեգիր | ՍԱՄՆԱՆ ՄՊԸ | (A 5) սպիտակ թուղթ :Դիմերեսի և դարձերեսի տառերը, գծերը կապույտ են: /օֆսեթ 80գ /ք.մ./ինքնապատճե թղթով 2 օրինակ | հատ | 9,4 | 94000 | 10000 | ք.Արտաշատ ,Ա.Խաչատրյան 116 | 10000 | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 25.12.2020թ. պատվիրատուի պահանջով: Առաջին մատակարարումը |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | | պետք է լինի պատվիրատուից պատվերը ստանալուց առնվազն 20 օրացուցային օր հետո: երկրորդ մատակարարումից սկսված պատվերը ստանալուց մատակարարումը իրականացնել 2 աշխատանքային օրվա ընթացքում: |
| 11 | 22821200 | Ստացիոնար հիվանդի քարտ մեծահասակի | ՍԱՄՆԱՆ ՄՊԸ | A-4 ֆորմատի տպագրական թուղթ, 8 հատ սպիտակ գույնի երկկողմ տպված տառերը և գծերը սև գույնի /օֆսեթ 100գ/ք.մ./, կազմը 150գ ք.մ կ | հատ | 54 | 540000 | 10000 | Ք.Արտաշատ ,Ա.Խաչատրյան 116 | 10000 | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 25.12.2020թ. պատվիրատուի պահանջով: Առաջին մատակարարումը պետք է լինի պատվիրատուից պատվերը ստանալուց առնվազն 20 |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | | օրացուցային օր հետո: երկրորդ մատակարարումից սկսված պատվերը ստանալուց մատակարարումը իրականացնել 2 աշխատանքային օրվա ընթացքում: |
| 12 | 22821200 | Ստացիոնար հիվանդի քարտ երեխայի | ՍԱՄՆԱՆ ՄԴԸ | A-4 ֆորմատի տպագրական թուղթ, 8 հատ սպիտակ գույնի երկկողմ տպված տառերը և գծերը սև գույնի /օֆսեթ 100գ/ք.մ./, կազմը 150գ ք.մ կ | հատ | 55 | 137500 | 2500 | Ք.Արտաշատ ,Ա.Խաչատրյան 116 | 2500 | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 25.12.2020թ. պատվիրատուի պահանջով: Առաջին մատակարարումը պետք է լինի պատվիրատուից պատվերը ստանալուց առնվազն 20 օրացուցային օր հետո: երկրորդ մատակարարումից սկսված պատվերը ստանալուց |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | | մատակարարումը իրականացնել 2 աշխատանքային օրվա ընթացքում: |
| 25 | 22821200 | Դեղատոմս սովորական | ՍԱՄՆԱՆ ՄԴԸ | A-5 ֆորմատի տպագրական թուղթ սպիտակ գույնի երկկողմ տպված տառերը և գծերը սև գույնի /օֆսեթ 80գ /ք.մ./ | հատ | 1,6 | 40000 | 25000 | Ք.Արտաշատ ,Ա.Խաչատրյան 116 | 25000 | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 25.12.2020թ. պատվիրատուի պահանջով: Առաջին մատակարարումը պետք է լինի պատվիրատուից պատվերը ստանալուց առնվազն 20 օրացուցային օր հետո: երկրորդ մատակարարումից սկսված պատվերը ստանալուց մատակարարումը իրականացնել 2 աշխատանքային օրվա ընթացքում: |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 26 | 22821200 | Անվճար դեղատոմս 2 պատճ. | ՍԱՄՆԱՆ ՄՊԸ | A-5 ֆորմատի տպագրական թուղթ սպիտակ գույնի երկկողմ տպված տառերը և գծերը սև գույնի /օֆսեթ 80գ /ք.մ./ինքնապատճե թղթով 2 օրինակ | հատ | 9 | 90000 | 10000 | Ք.Արտաշատ ,Ա.Խաչատրյան 116 | 10000 | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 25.12.2020թ. պատվիրատուի պահանջով: Առաջին մատակարարումը պետք է լինի պատվիրատուից պատվերը ստանալուց առնվազն 20 օրացուցային օր հետո: երկրորդ մատակարարումից սկսված պատվերը ստանալուց մատակարարումը իրականացնել 2 աշխատանքային օրվա ընթացքում: |
| 27 | 22821200 | Բիոքիմիական քննության | ՍԱՄՆԱՆ ՄՊԸ | *A5 ֆորմատի տպագրական թուղթ սպիտակ գույնի երկկողմ տպված տառերը և գծերը սև գույնի /օֆսեթ 80գ/ք.մ./* | հատ | *1,5* | *45000* | 30000 | *Ք.Արտաշատ ,Ա.Խաչ* | 30000 | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | բլանկ ձև N9 | | | | | | | *տորյան 116* | | համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 25.12.2020թ. պատվիրատուի պահանջով: Առաջին մատակարարումը պետք է լինի պատվիրատուից պատվերը ստանալուց առնվազն 20 օրացուցային օր հետո: երկրորդ մատակարարումից սկսված պատվերը ստանալուց մատակարարումը իրականացնել 2 աշխատանքային օրվա ընթացքում: |
| *28* | 22821200 | Մեզի քննությ ան բլանկ ձև N12 | *ՍԱՄՆԱ Ն ՄՊԸ* | A5 ֆորմատի տպագրական թուղթ սպիտակ գույնի երկկողմ տպված տառերը և գծերը սև գույնի /օֆսեթ 80գ/ք.մ./ | հատ | *1,5* | *52500* | 350 00 | *Ք.Արտա շատ ,Ա.Խաչ ատրյան 116* | 35000 | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 25.12.2020թ. պատվիրատուի |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | | պահանջով: Առաջին մատակարարումը պետք է լինի պատվիրատուից պատվերը ստանալուց առնվազն 20 օրացուցային օր հետո: երկրորդ մատակարարումից սկսված պատվերը ստանալուց մատակարարումը իրականացնել 2 աշխատանքային օրվա ընթացքում: |
| 29 | 22821200 | Արյան քննությ ան բլանկ | ՍԱՄՆԱ Ն ՄՊԸ | A5 ֆորմատի տպագրական թուղթ սպիտակ գույնի երկկողմ տպված տառերը և գծերը սև գույնի /օֆսեթ 80գ/ք.մ./ | հատ | 1,5 | 15000 | 100 00 | Ք.Արտաշատ ,Ա.Խաչատրյան 116 | 10000 | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 25.12.2020թ. պատվիրատուի պահանջով: Առաջին մատակարարումը պետք է լինի պատվիրատուից |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | | պատվերը ստանալուց առնվազն 20 օրացուցային օր հետո: երկրորդ մատակարարումից սկսված պատվերը ստանալուց մատակարարումը իրականացնել 2 աշխատանքային օրվա ընթացքում: |
| 30 | 22821200 | Արյան քննության բլանկ ձև N11 | ՍԱՄՆԱՆ ՄՊԸ | A5 ֆորմատի տպագրական թուղթ սպիտակ գույնի երկկողմ տպված տառերը և գծերը սև գույնի /օֆսեթ 80գ/ք.մ./ | հատ | 1,5 | 45000 | 30000 | Ք.Արտաշատ ,Ա.Խաչատրյան 116 | 30000 | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 25.12.2020թ. պատվիրատուի պահանջով: Առաջին մատակարարումը պետք է լինի պատվիրատուից պատվերը ստանալուց առնվազն 20 օրացուցային օր հետո: երկրորդ |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | | մատակարարումից սկսված պատվերը ստանալուց մատակարարումը իրականացնել 2 աշխատանքային օրվա ընթացքում: |
| 31 | 22821200 | Բջջաբանական քննության բլանկ N8 | ՍԱՄՆԱՆ ՄՊԸ | A5 ֆորմատի տպագրական թուղթ սպիտակ գույնի երկկողմ տպված տառերը և գծերը սև գույնի /օֆսեթ 80գ/ք.մ./ | հատ | 1,6 | 4800 | 3000 | Ք.Արտաշատ ,Ա.Խաչատրյան 116 | 3000 | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 25.12.2020թ. պատվիրատուի պահանջով: Առաջին մատակարարումը պետք է լինի պատվիրատուից պատվերը ստանալուց առնվազն 20 օրացուցային օր հետո: երկրորդ մատակարարումից սկսված պատվերը ստանալուց մատակարարումը իրականացնել 2 |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | | աշխատանքային օրվա ընթացքում: |
| 32 | 22821200 | Կղանքի հետազոտության ձև N9 | ՍԱՄՆԱՆ ՍՊԸ | A5 ֆորմատի տպագրական թուղթ սպիտակ գույնի երկկողմ տպված տառերը և գծերը սև գույնի /օֆսեթ 80գ/ք.մ./ | հատ | 1,6 | 8000 | 5000 | Ք.Արտաշատ ,Ա.Խաչատրյան 116 | 5000 | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 25.12.2020թ. պատվիրատուի պահանջով: Առաջին մատակարարումը պետք է լինի պատվիրատուից պատվերը ստանալուց առնվազն 20 օրացուցային օր հետո: երկրորդ մատակարարումից սկսված պատվերը ստանալուց մատակարարումը իրականացնել 2 աշխատանքային օրվա ընթացքում: |
| 33 | 22821200 | Ուռուցքային | ՍԱՄՆԱՆ ՍՊԸ | A5 ֆորմատի տպագրական թուղթ սպիտակ գույնի | հատ | 1,7 | 850 | 500 | Ք.Արտաշատ | 500 | ֆինանսական միջոցներ |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | մակերն եր ձև N7 | | միակողմ տպված տառերը և գծերը սև գույնի /օֆսեթ 80գ/ք.մ./ | | | | | ,Ա.Խաչ ատրյան 116 | | նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 25.12.2020թ. պատվիրատուի պահանջով: Առաջին մատակարարումը պետք է լինի պատվիրատուից պատվերը ստանալուց առնվազն 20 օրացուցային օր հետո: երկրորդ մատակարարումից սկսված պատվերը ստանալուց մատակարարումը իրականացնել 2 աշխատանքային օրվա ընթացքում: |
| 34 | 22821200 | Քունկի բակտեր իոսկոպ իկ | ՍԱՄՆԱ Ն ՄՊԼ | A5 ֆորմատի տպագրական թուղթ սպիտակ գույնի միակողմ տպված տառերը և գծերը սև գույնի /օֆսեթ 80գ/ք.մ./ | հատ | 1,6 | 6400 | 400 0 | Ք.Արտա շատ ,Ա.Խաչ ատրյան 116 | 4000 | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | քննություն | | | | | | | | | օրվանից սկսած մինչև 25.12.2020թ. պատվիրատուի պահանջով: Առաջին մատակարարումը պետք է լինի պատվիրատուից պատվերը ստանալուց առնվազն 20 օրացուցային օր հետո: երկրորդ մատակարարումից սկսված պատվերը ստանալուց մատակարարումը իրականացնել 2 աշխատանքային օրվա ընթացքում: |
| 35 | 22821200 | Ուլտրաձայնային հետազոտության բլանկ | *ՍԱՄՆԱՆ ՄՊԸ* | A-4ֆորմատի տպագրական թուղթ սպիտակ գույնի միակողմ տպված տառերը և գծերը սև գույնի /օֆսեթ 80գ /ք.մ./ | հատ | *1,5* | *15000* | 10000 | *Ք.Արտաշատ ,Ա.Խաչատրյան 116* | 10000 | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 25.12.2020թ. պատվիրատուի պահանջով: Առաջին |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | | մատակարարումը պետք է լինի պատվիրատուից պատվերը ստանալուց առնվազն 20 օրացուցային օր հետո: երկրորդ մատակարարումից սկսված պատվերը ստանալուց մատակարարումը իրականացնել 2 աշխատանքային օրվա ընթացքում: |
| 36 | 22821200 | Կռագուլ ոգրամա ձև N7 | *ՍԱՄՆԱ Ն ՄՊԸ* | A5 ֆորմատի տպագրական թուղթ սպիտակ գույնի միակողմ տպված տառերը և գծերը սև գույնի /օֆսեթ 80գ/ք.մ./ | հատ | *1,6* | *16000* | 100 00 | *Ք.Արտաշատ ,Ա.Խաչատրյան 116* | 10000 | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 25.12.2020թ. պատվիրատուի պահանջով: Առաջին մատակարարումը պետք է լինի պատվիրատուից պատվերը ստանալուց |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | | առնվազն 20 օրացուցային օր հետո: երկրորդ մատակարարումից սկսված պատվերը ստանալուց մատակարարումը իրականացնել 2 աշխատանքային օրվա ընթացքում: |
| 38 | 22821200 | Ուղեգիր լաբորատոր գործիքային հետազոտության N6 | ՍԱՄՆԱՆ ՄՊԸ | A-5 ֆորմատի տպագրական թուղթ սպիտակ գույնի երկկողմ տպված տառերը և գծերը սև գույնի /օֆսեթ 80գ /ք,մ./ | հատ | 1,6 | 80000 | 50000 | Ք.Արտաշատ ,Ա.Խաչատրյան 116 | 50000 | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 25.12.2020թ. պատվիրատուի պահանջով: Առաջին մատակարարումը պետք է լինի պատվիրատուից պատվերը ստանալուց առնվազն 20 օրացուցային օր հետո: երկրորդ մատակարարումից սկսված պատվերը |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | ստանալուց մատակարարումը իրականացնել 2 աշխատանքային օրվա ընթացքում: |
| 40 | 22821200 | Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկում ստացող քաղաքացուն տրվող իրազեկման թերթիկ | ՍԱՄՆԱՆ ՄՊԸ | A-4 ֆորմատի տպագրական թուղթ ,2 թերթ երկկողմ սպիտակ գույնի տառերը և գծերը սև գույնի /օֆսեթ 80գ /ք.մ./ | հատ | 3,5 | 28000 | 8000 | Ք.Արտաշատ ,Ա.Խաչատրյան 116 | 8000 | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 25.12.2020թ. պատվիրատուի պահանջով: Առաջին մատակարարումը պետք է լինի պատվիրատուից պատվերը ստանալուց առնվազն 20 օրացուցային օր հետո: երկրորդ մատակարարումից սկսված պատվերը ստանալուց մատակարարումը իրականացնել 2 |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | | աշխատանքային օրվա ընթացքում: |
| *44* | 22821200 | Թունավորման շտապ հաղորդման քարտ | *ՍԱՄՆԱՆ ՄՊԸ* | *A-4 ֆորմատի տպագրական թուղթ, 2 հատ: 1հատը երկկողմ տպված, մյուսը միակողմ :սպիտակ գույնի երկկողմ տպված տառերը և գծերը սև գույնի /օֆսեթ 100գ/ք.մ./* | հատ | *4* | *6000* | 1500 | *Ք.Արտաշատ ,Ա.Խաչատրյան 116* | 1500 | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 25.12.2020թ. պատվիրատուի պահանջով: Առաջին մատակարարումը պետք է լինի պատվիրատուից պատվերը ստանալուց առնվազն 20 օրացուցային օր հետո: երկրորդ մատակարարումից սկսված պատվերը ստանալուց մատակարարումը իրականացնել 2 աշխատանքային օրվա ընթացքում: |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 45 | 22821200 | Ընդունման և անհետաձգելի բուժօգնության բաժանմունքի զննման քարտ | ՍԱՄՆԱՆ ՄՊԸ | *A-4 ֆորմատի տպագրական թուղթ երկկողմ ;4 թերթ,սպիտակ գույնի տառերը և գծերը կապույտ գույնի /օֆսեթ 80գ /բ.մ./* | հատ | *7* | *105000* | 15000 | *Ք.Արտաշատ ,Ա.Խաչատրյան 116* | 15000 | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 25.12.2020թ. պատվիրատուի պահանջով: Առաջին մատակարարումը պետք է լինի պատվիրատուից պատվերը ստանալուց առնվազն 20 օրացուցային օր հետո: երկրորդ մատակարարումից սկսված պատվերը ստանալուց մատակարարումը իրականացնել 2 աշխատանքային օրվա ընթացքում: |
| 51 | 22821200 | Ակտիվ դոնորի բժշկակ | ՍԱՄՆԱՆ ՄՊԸ | *A-5 ֆորմատի տպագրական թուղթ,5թերթ,երկկողմ սպիտակ գույնի տառերը և գծերը սև գույնի /օֆսեթ 80գ /բ.մ./* | հատ | *2* | *400* | 200 | *Ք.Արտաշատ ,Ա.Խաչ* | 200 | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ան քարտ | | | | | | | ատրյան 116 | | համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 25.12.2020թ. պատվիրատուի պահանջով: Առաջին մատակարարումը պետք է լինի պատվիրատուից պատվերը ստանալուց առնվազն 20 օրացուցային օր հետո: երկրորդ մատակարարումից սկսված պատվերը ստանալուց մատակարարումը իրականացնել 2 աշխատանքային օրվա ընթացքում: |
| 53 | 22821200 | Բժշկական եզրակացություն զենքի տրամադրման խոչընդոտող | ՍԱՄՆԱՆ ՍՊԸ | *A-4 ֆորմատի տպագրական թուղթ միակողմ ,սպիտակ գույնի տառերը և գծերը սև գույնի /օֆսեթ 80գ /բ.մ./* | հատ | *1,9* | *1900* | 1000 | *Ք.Արտաշատ ,Ա.Խաչատրյան 116* | 1000 | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 25.12.2020թ. պատվիրատուի |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հիվանդությունների և ֆիզիկական թերությունների առկայության կամ բացակայության ձև N2 | | | | | | | | | պահանջով: Առաջին մատակարարումը պետք է լինի պատվիրատուից պատվերը ստանալուց առնվազն 20 օրացուցային օր հետո: երկրորդ մատակարարումից սկսված պատվերը ստանալուց մատակարարումը իրականացնել 2 աշխատանքային օրվա ընթացքում: |
| 60 | 22821200 | Ուռուցքաբանական հիվանդի ամբուլատոր քարտ | ՍԱՄՆԱՆ ՄՊԸ | A-4ֆորմատի տպագրական թուղթ,երկկողմկողմ սպիտակ գույնի տառերը և գծերը սև գույնի 5 թերթ/օֆսեթ 80գ /ք.մ./: | հատ | 20 | 10000 | 500 | Ք.Արտաշատ ,Ա.Խաչատրյան 116 | 500 | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 25.12.2020թ. պատվիրատուի պահանջով: Առաջին մատակարարումը պետք է լինի պատվիրատուից |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | | պատվերը ստանալուց առնվազն 20 օրացուցային օր հետո: երկրորդ մատակարարումից սկսված պատվերը ստանալուց մատակարարումը իրականացնել 2 աշխատանքային օրվա ընթացքում: |
| 62 | 22821200 | Բժշկական քարտ տուբերկուլյոզով հիվանդի | *ՍԱՄՆԱՆ ՄՊԸ* | *Առաջին 2 թերթը A-5 ֆորմատի տպագրական թուղթ,երկկողմ սպիտակ գույնի տառերը և գծերը սև գույն: մյուս 22 թերթը A 5 սպիտակ թուղթ /օֆսեթ 80գ /ք.մ./:* | հատ | *80* | *12000* | 150 | *Ք.Արտաշատ ,Ա.Խաչատրյան 116* | 150 | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 25.12.2020թ. պատվիրատուի պահանջով: Առաջին մատակարարումը պետք է լինի պատվիրատուից պատվերը ստանալուց առնվազն 20 օրացուցային օր հետո: երկրորդ |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | մատակարարումից սկսված պատվերը ստանալուց մատակարարումը իրականացնել 2 աշխատանքային օրվա ընթացքում: |
| 67 | 22821200 | Շտապ հաղորդման թերթիկ | *ՍԱՄՆԱՆ ՍՊԸ* | *A-5 ֆորմատի տպագրական թուղթ,երկկողմ սպիտակ գույնի տառերը և գծերը սև գույնի /օֆսեթ 80գ /ք.մ./:* | հատ | *2* | *600* | 300 | *Ք.Արտաշատ ,Ա.Խաչատրյան 116* | 300 | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 25.12.2020թ. պատվիրատուի պահանջով: Առաջին մատակարարումը պետք է լինի պատվիրատուից պատվերը ստանալուց առնվազն 20 օրացուցային օր հետո: երկրորդ մատակարարումից սկսված պատվերը ստանալուց մատակարարումը իրականացնել 2 |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | | | աշխատանքային օրվա ընթացքում: |
| 70 | 22821200 | Բնակչի այցի հաշվառ ման ձև | ՍԱՄՆԱՆ ՄՊԸ | *A-6 ֆորմատի տպագրական թուղթ,միակողմ սպիտակ գույնի տառերը և գծերը սև գույնի /օֆսեթ 80գ /p.մ./:* | հատ | *0,8* | *40000* | | 500<br>00 | *Ք.Արտաշատ ,Ա.Խաչատրյան 116* | 50000 | ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 25.12.2020թ. պատվիրատուի պահանջով: Առաջին մատակարարումը պետք է լինի պատվիրատուից պատվերը ստանալուց առնվազն 20 օրացուցային օր հետո: երկրորդ մատակարարումից սկսված պատվերը ստանալուց մատակարարումը իրականացնել 2 աշխատանքային օրվա ընթացքում: |
| | | | | | | | | *1644950* | | | | |
| | | | | | | | | | | | | |

* Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավելի լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույնակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

**ԳՆՈՐԴ**

ԱՐՏԱՇԱՏԻ ԲԿ>ՓԲԸ
Ք.Արտաշատ, Ա.Խաչատրյան 116

Հ/Հ-163098222223

ՀԷԲ Արտաշատի

ՀՎՀՀ-04220707

Հ. Համբարձումյան

/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

ՍԱՄՆԱՆ ՍՊԸ

Ք. Երևան, Աջափնյակ, Հասրաթյան 8/1(
Հյաէկոնոմբանկ ԲԲԸ Մետաքս մ/ճ

h/h 163218023543

ՀՎՀՀ 01272957

Մանվել Հայրապետյան

/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված N 2*
*« 11 » 02 20 20 թ. կնքված*
*ԱԲԿ-ԳՀ-ԱՊՁԲ -2020/12 -2 ծածկագրով պայմանագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 2 | 22111200 | Դեղորայքի գիրք N6 | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | % |
| 3 | 22111200 | Տաբելի գիրք | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | % |
| 1 | 22111200 | Դեղորայքի գիրք N3 | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | % |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 5 | 39263200 | Գրասենյակային գիրք 200թերթ | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | % |
| 10 | 22821200 | Հետազոտության ուղեգիր | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | % |
| 11 | 22821200 | Ստացիոնար հիվանդի քարտ մեծահասակի | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | % |
| 12 | 22821200 | Ստացիոնար հիվանդի քարտ երեխայի | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | % |
| 25 | 22821200 | Դեղատոմս սովորական | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | % |
| 26 | 22821200 | Անվճար դեղատոմս 2 պատճ. | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | % |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 27 | 22821200 | Բիոքիմիական քննության բլանկ ձև N9 | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | % |
| 28 | 22821200 | Մեզի քննության բլանկ ձև N12 | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | % |
| 29 | 22821200 | Արյան քննության բլանկ | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | % |
| 30 | 22821200 | Արյան քննության բլանկ ձև N11 | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | % |
| 31 | 22821200 | Բջջաբանական քննության բլանկ N8 | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | % |
| 32 | 22821200 | Կղանքի հետազոտության ձև N9 | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | % |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 33 | 22821200 | Ուռուցքային մակերներ ձև N7 | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | % |
| 34 | 22821200 | Քսուկի բակտերիոսկոպիկ քննություն | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | % |
| 35 | 22821200 | Ուլտրաձայնային հետազոտության բլանկ | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | % |
| 36 | 22821200 | Կոագուլոգրամա ձև N7 | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | % |
| 38 | 22821200 | Ուղեգիր լաբորատոր գործիքային հետազոտության N6 | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | % |
| 40 | 22821200 | Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում ստացող քաղաքացուն տրվող իրազեկման թերթիկ | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | % |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 44 | 22821200 | Թունավորման շտապ հաղորդման քարտ | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | % |
| 45 | 22821200 | Ընդունարանի և անհետաձգելի բուժօգնության բաժանմունքի զննման քարտ | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | % |
| 51 | 22821200 | Ակտիվ դոնորի բժշկական քարտ | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | % |
| 53 | 22821200 | Բժշկական եզրակացություն զենքի տրամադրմանը խոչընդոտող հիվանդությունների և ֆիզիկական թերությունների առկայության կամ բացակայության ձև N2 | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | % |
| 60 | 22821200 | Ուռուցքաբանական հիվանդի ամբուլատոր քարտ | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | % |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 62 | 22821200 | Բժշկական քարտ տուբերկուլյոզով հիվանդի | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | % |
| 67 | 22821200 | Շտապ հաղորդման թերթիկ | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | % |
| 70 | 22821200 | Բնակչի այցի հաշվառման ձև | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | % |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

**ԳՆՈՐԴ**

ԱՐՏԱՇԱՏԻ ԲԿ>ՓԲԸ
Ք.Արտաշատ, Ա.Խաչատրյան 116
Հ/Հ-163098222223
ՀէԲ Արտաշատի
ՀՎՀՀ-04220707
Հ. Համբարձումյան

-----------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

ՍԱՄՆԱՆ ՍՊԸ

Ք. Երևան, Աջափնյակ, Հասրաթյան 8/1(
Հյաէկոնոմբանկ ԲԲԸ Մետաքս մ/ճ
h/h 163218023543
ՀՎՀՀ 01272957
Մանվել Հայրապետյան

-----------------------------
/ստորագրություն/
Կ.Տ